

Թէ որովհետեւ սգորով լայն եմ, անպատճառ իրենց պէս կրնանք:

Չափազանց զանազան էր հայերից և տեղական կառավարութիւնից:

Մանաւնդ հայերի հիւրասիրութեան և հետաքրքրութեան վրայ հիսցել էր ամեն տեղ:

Ամսօր 27-ին պ. Լազունին հրաւիրեցի ինչ մօտ ճաշի, ուրախութեամբ ընդունեց և իմ բազմակողմանի հարցերին ծանրամասն պատասխանեց:

Երեկոցան եկաւ ինչ մօտ հրաժեշտի մնաց բոլոր անձեր և հետագա շարունակելու իր ուղևորութիւնը:

9. Լազուն տեղիցս ճանապարհուեց Լալջան և Թմուրի Բաբունի վրայով՝ Մազանդարան Խորասան ապա Թէհրան է ցնալու:

Գ ՌԵՏԱՆԻՍ

Լ Ա Ռ Ր Ե Ր

ԹԵՐԻՔԻ

◆ Թերթիս ներկայ համարում հրատարակում ենք մեր աշխատակից մի ունեւ Երեսասարդի գրական վաստակներից մի գեղեցիկ օտանաւոր, որի թարգմանութիւնը կտանք յաջորդիւ:

◆ Որովհետեւ տէրութեան վճարելիք հարկ ցորենը շատ անգամ խառն է լինում հողի և քարի հետ, այդ պատճառով գնն. նոս. Շօլա-էդ-Դովլէն կարգով գրել է խիստ հսկողութիւն լինի այդ զաւլաների վրայ և նշանակել է երկու հսկիչներ՝ մէկ կառավարութեան և մէկ կառավարութեան կողմից, որ վստ և հոգախառն ցորեն չբերուին և չընդունուին ամբար: Պետութեան հաստնելիք ցորենները մի ամսուայ ընթացքում պէտք է յանձնուին արքունի ամբարը, որ ժողովուրդը չնեղուի հացի պակասութիւնից: Ուշացողները կտուգանուին և խալվորին էլ 10 դոպն տուգանք կտան առանձին:

◆ Տեղական թուրքերի մէջ կազմուել է «Շարդ» անունով մի ընկերութիւն. որ Նարպայից և Ամերիկայից բերում է երկրագործական մեքենաներ արդիւնաբերութիւն գարգացնելու համար: Ամերիկայից այդ ընկերութիւնը բերել էր տուել Քլարք անունով մի մեքենագէտ, որ բաւարարութիւն չտուեց: Այժմ Բաղդադից կանչել են մի թուրք ինժեներ, որ Միանգաբում մօտօրով մի ժամում 6 խալվար ջուր է հանում Ջղաթուց և ուղղում մերձակայ ցանաւած հողերը:

◆ Լուսն Ենք փչում է Դուխար գետի հայտն եկեղեցին: Հրաւիրում ենք հոգևոր իշխանութեան ուղղութիւնը: Լու է տղու և հանգստարանի արդիւնքը յաղակացուի առժամանակ եկեղեցւոյ նորոգութեան, փոխանակ առաջնորդարան բերելու:

◆ Ամսիս 14-ին ժամը 10-ին եղանակը սկսեց խիստ ցրտել: 11-ից եկաւ հողմախառն ձիւն, որ շարունակուեց մինչև ժամը 6 ու կէսը: Ներկայ տարում սա երկրորդ անգամն է ձիւնում:

◆ Ստամբուլի հայ և թուրք գիւղացիների արիւնը ծծող և սպանուած Հաճի-Թաղու տղան իր մի ծառայով փողոցից ձիով անցնելիս է եղել ծառան՝ ինչպէս ասում են, վիրաւորանք է առնել տնցնող մի ուն օֆիցերի, որը ասորճանուի հարուածով տեղն ու տեղը սպանել է վիրաւորող ծառային՝ Խաթիր Թաղում:

◆ Բռնուել են տաճկահայտակ Առնաւուտ դրամահատներ: Մանրամասնութիւնները յաջորդիւ:

◆ Հաւաստի աղբիւրից տեղեկանում

ենք, որ պ. Զ. Բուզադեանը հենց առաջին (երկու և վերջին) պատգամաւորական ժողովում հրաժարուել է պատգամաւորութիւնից: Նաև թեմական խորհրդի անգամութիւնից, էլ չգիտենք ինչու համար են ընտրել: Թեմական խորհրդից հրաժարուած է և պ. Ս. Ժամհարեանը, որ իւր ընտրութիւնից ցարդ, որքան լսել ենք, մի նիստի է եկել:

Թեմիս առաջնորդի գաւառ ելած ժամանակ, երբ 6 տնգամ թեմ. խորհրդի նիստ է ուղեւ գումարել փոխանորդ քահանան, իր հրամարումն է յայտնել և պ. Զ. Նազարբեգեանը:

◆ 9. Զ. Բուզադեանը հրաժարուած է վաղուց և կենտրոնականի հոգաբարձութիւնից:

◆ Մեզ հասնում են բուռն զանգատներ և և տեղեղ լուրեր այն մասին, որ հայ թագերում, մանաւանդ Լիւաւում, խանութ բացած թուրք մագաղիչները անպարկեշտ և սրկալական վերաբերմունքներ են ցուցնում հայ տղաներին և աղջկաներին: Մեր ժողովուրդը պէտք է ընթերցէ չափ զնէ կամ առաջն ասնէ այդ թուրքերի լարշտ թեմանց:

◆ Լուսն Ենք, որ Լիւաւի գաղութները բարեբարութիւն ալրի ա. Շահնազարեանը էլի նեղուել է գրամի պակասութիւնից: Երբեմն առաջնորդ հայրը իրենից ամսական 10 թմաւ տալիս է այրուն հոգաբարձութիւնից ստանալու պայմանով:

ՆՈՐԱՆՆԵՐ

Ամսօր 11-ին Ուրմի ուղևորուեց Լալազարեան վարդապետը: Մարտի 12-ը և 13-ը Ենք, որ Լիւաւի գաղութները բարեբարութիւն ալրի ա. Շահնազարեանը էլի նեղուել է գրամի պակասութիւնից: Երբեմն առաջնորդ հայրը իրենից ամսական 10 թմաւ տալիս է այրուն հոգաբարձութիւնից ստանալու պայմանով:

◆ Ստամբուլի Սարփարատը, Ռուսաց թուրք ագենտի պահանջմամբ, Դիւան է կանչել Ստամբուլի հայաբնակ գիւղերի ներկայացուցիչներին և յայտնել, թէ նրանք պիտի տան մի ստորագրութիւն, որ պարտուոր են 20,000 թուման վճարել, եթէ նեղին, վիրաւորին կամ հալածելու լինեն առաջաւանութիւն ընդունած մի հայի: Ներկայացուցիչները մերժել են այդ տարօրինակ պահանջը և դէպքի մասին վաղուց յայտնել առաջնորդարան, որ կարծում ենք եռանդուն միջոցներ ձեռք կառնի՝ տեղն ու տեղը խեղդելու մեր ժողովրդի մէջ՝ մայրենի եկեղեցուց հեռանալու այդ կործանարար և ազգախայտառակ շարժումը:

◆ Խանասորում 1-2 շաբաթ առաջ սպանուել են 4 հայեր:

ՊԵՐՏԵՐԵՐ

Պարսից կառավարութիւնն ընդունեց այն պայմանները, որ մշակել են Պոլսում Ռուսաստանի և Անգլիայի ներկայացուցիչները թուրք-Պարսկական հարցի առիթով:

ԵՐԵՎԱՆ

Հայերի նախաձեռնութեամբ Պոլսում կատարուած է միութիւն բողոքական հայերի հետ: Իւրաքանչիւր կողմը, պահում է ազատ իւր կրօնական համոզումները: Այդ միութեամբ բողոքականները ևս մասնակցում են ազգային ժողովին և վայելում են սահմանադրութեան իրաւունքները, իբրեւ անգամը հար ազգութեան. միացել նաև են դպրոցական, կրթական և այլ հարցերում: Այդ միացումը ընդունուել է չտեսնուած խանդավառութեամբ: Թող այս լսեն ու իմանան սեղիս հաս ու կենտ բողոքականացած սօֆի հայերը:

◆ Նոյեմբերի վերջում Բերնում մտադրութիւն կայ գումարել հայաստանի ի կոնգրէսը: Զեկուցանող լինելու է Պօղոս Նուպար փաշան: Կոնգրէսը զբաղուելու է այն դիմումի մշակութեամբ,

որ ուղղուելու է մեծ պետութիւններին և Հայաստանի բարենորոգումներին մասին:

◆ Մէկ երկու շաբաթ առաջ Սղբա-կից եկած հայերը պատմում են, որ Տաճիկ կառավարութիւնը խստիւ արգելում է հայերին կին և երեխայ դուրս հանել երկրից: Քրդերն իջնելով դաշտերը՝ ըսկոնել են խիստ նեղել ժողովրդին, որ ապրում է նոր ջարդի ուրուականի և սարսափների ներքոյ:

ԵՐԵՎԱՆ

Վերջերս Կիւնում դատարանը արգարացրեց Իւշիկեան սպանութեան մէջ մեղադրուող Բէլիսին: Նրա արգարացման առիթը գաղափարը հրաժարական է տուել: Թերթերը յայտնում են, որ հրաժարում է և արդարադատութեան միջնորդ Նէգլովիտովը: Բէլիսի արգարացման լուրը լսելիս՝ յայտնի Պարիզիկիզը բացաւ կանչել է թիքերին մեր երեսին:

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱՆԵՐԸ

Ուրմի. — պ. Ա. Մարգարեան
Մարագո. — Մ. Խան Աթթարի
Արգաթիւ. — Յովհ. Մհ. Պետրոսեան
Աստաւա. — Ո. Բժշկեան
Էնդի. — Ռ. Մկրտչեան
Խաշտ. — Իսր. Քար. Թիւնեան
Թէհրան. — Ռաֆ. Մաքսիսեան
Սպահան. — Նիսիս Դ. Թեմա
Ջալֆա. (Պարսկ.) — Ն. Ալեքսանեան
Օշական (Ռուս.) — Միսակ Օշանեան
Պոլիս. — Խմբագր. Թիւնեան «Կայծ» և «Կոհակ»

Փրովիդէնս (Ամերիկա) — Խմբ. «Երեւոս» տարդ Հայաստան
Բաղդադ. — Մ. Ն. Իսկէնդերեան

ՊՈՍՏԱՐԿՂ

Մեր գործակալներին. — Ուղարկուած է բոլորեղ համապատասխան բաղադները բաժանորդներին ցուցակը, խնդրում ենք փութով գանձել ամբողջ տարուայ բաժնեգները

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԱՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ

ՀԱՅԱՐԻՏԵՐՈՆ ՈՒՍՈՒՄՆՈՒԹԻՐՈՆ

1914

Տ Ա Ր ՈՒ Յ Ն

Առաջիկայ 1914-էն սկսեալ «Հանդէս Անթրոպոլի քննութեան» անարկայ պիտի ըլլան մասնաւորապէս հայ ազգագրութիւն, ժողովրդագրութիւն, ճարտարապետութիւն, պատմութիւն, գեղարուեստ և զիցարանութիւն համեմատական կրօնախօսութեան (vergleichende Religionswissenschaft) ամենանորագին մեթոդով:

Տարեկան բաժնեգրեց և կանխիկ վճարմամբ՝

Տաճկաստանի համար.	15 Ֆր. 7 շ. 42
Ռուսաստանի	6 ռուբլի
Ամերիկայի	3 դոլար

Մեր հասցեն է՝

Rédaction de la revue „Handes Amsorya“

VIENNE (Autriche), VII/2, Mechitharistengasse 4.

և շուտով մեզ դիմելու Քոհմեր պ. պ. բաժանորդներն իմանան, որ մենք առանց շահուելու, ձրի և մի բան էլ դեռ մեր սուղ միջոցներէ թերթի հրատարակութեան վրայ զնեղու և շնորհաբեւութ, էլ չենք կարողանում ծածկել ծախսերը, որովհետեւ թղթաւաճառ, դրաշմոր, տպարան, ցրել, փոստ ամեն շաբաթ իրենց հերթին սակաւագումար իրենց գրաման են պահանջում և ստանում, իսկ մենք նեղուած ենք ժամանակին չստանալով մեր բաժանորդներից մեր գրամաները:

Քաւրիլ. — պարոն «Երեսասարդութիւն»-ին — Գաղաքային փոստի հաստատմամբ եթէ դուք ուղղում էք ցոյց տալ, որ և՛ փող ունեք, և՛ պարագայ ու անվերջ ժամանակ ընդունայն վասնելու, բայց գիտցէք, որ ուրիշները ժամանակ չունեն գաղափարականութիւն ընդհանուր և կարգաւոր: Ներանձնորան, որ վերջը չի ամաչի ու չի կորուսի իւր գրամաները պահանջով:

Քաւրիլ. — Մեր պ. պ. բաժնեգրները պարագայում գանգատուած էք, որ ձեզ կանոնաւոր թերթ չի ուղարկուում: Տրիշը յայտնում է, որ ամենքին թերթ բաժանում է: Ինչու ում է կարգադրել ծառաներին կամ փողերին, որ դուք պարագայում թերթերը բերեն ներս և յանձնեն ձեզ: Բողոքովն չստացուած դէպքում խնդրում ենք ստանալ պ. Արէլ Մաղգասարեանից, Ղալաթայի, Սամսոն խան մէջեղի մօտ:

Սինգափուր. — «Ազգ. պ. Կոհակ»-ը ցատ 26ր պահանջման 26ր ուղարկուեց «Միտք», № 13-ից սկսեալ:

Բաղդադ. — Մ. Ն. Իսկէնդերեանին — Համաւայն 26ր նամակի ուղարկուեց 26ր «Միտք»: Նախորդ համարները ուղարկուած լինելով, միայն № 9-ից և 10-ից ուղարկուեց 5-ական օրինակ: Այսուհետեւ կանոնաւոր կ'ուղարկուին 26ր պահանջած 10-ական զրեւանակները:

Այնրապ. — Ղազէզեանին, 26ր ուղարկուեց «Միտք» № 13-ից սկսեալ:

Խմբագր. Հրատարակիչ՝ Ալ. Տր. Վարդաբեան

Տնօրէն՝ Միքայիլ Բաղդասարեան